Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱՀ - 241 08.05 2024թ.

«ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը լուծելու մասին

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 2024 թվականի մարտի 15-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-8 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Համաձայն «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության Վաճառողն առաջարկում է լուծել Պայմանագիրը 17-րդ չափաբաժնի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը կազմում է 46000 /քառասունվեց հազար/ ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 69000 /վաթսունինը հազար/ ՀՀ դրամ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մինչև 2024 թվականի մայիսի 14-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների գումարները, ապա Վաճառողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի 1570053952390100 հաշվեհամարին և վճարված կտրոնները ներկայացնել Պատվիրատուի գնումների բաժնին:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն Հ. Զոհրաբյան